

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2010 թվականի N 567-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 7-րդ մասի` Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայողի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական ծառայողի զինվորական հաշվառման կարգը` համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

S. Սարգսյան

2010 թ. մայիսի 20
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
մայիսի 13-ի N 567-Ն որոշման

Կ Ա Ր Գ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ**

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայողին և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունում (այսուհետ` քրեակատարողական ծառայություն) քաղաքացիական ծառայողին քրեակատարողական ծառայությունում զինվորական հաշվառման վերցնելու կարգը:

2. Քրեակատարողական ծառայությունում պաշտոնի նշանակված Հայաստանի Հանրապետության քաղաքացիները զինվորական հաշվառման են վերցվում քրեակատարողական ծառայությունում:

3. Քրեակատարողական ծառայությունում պաշտոնի նշանակված անձին քրեակատարողական ծառայությունում զինվորական հաշվառման վերցնելու համար հիմք է պաշտոնի նշանակելու մասին հրամանը:

4. Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող անձնակազմի կառավարման բաժինը (այսուհետ՝ բաժին) քաղաքացուն քրեակատարողական ծառայության պաշտոնի նշանակելու մասին հրամանի արձակման օրվանից 10-օրյա ժամկետում նրա զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ է ներկայացնում նրա զինվորական հաշվառումը քրեակատարողական ծառայությունում իրականացնելու մասին գրություն և կից ներկայացվում են՝

1) քրեակատարողական ծառայությունում պաշտոնի նշանակվելու մասին հրամանի քաղվածքը.

2) անվանական ցուցակ՝ համաձայն N 1 ձևի.

3) զինվորական գրքույկ:

5. Զինվորական կոմիսարիատն անվանական ցուցակների հիմնավորվածությունը ճշտելուց հետո զինվորական հաշվառման փաստաթղթերում կատարում է համապատասխան նշումներ զինվորական հաշվառումը քրեակատարողական ծառայությունում իրականացնելու մասին: Հաշվառման քարտը պահպանվում է զինվորական կոմիսարիատում՝ հատուկ հաշվառման վերցված զինապարտների քարտադարանում, զինվորական գրքույկը, իսկ պահեստագործի սպաների համար՝ զինվորական կրճատված անձնական գործը փոխանցվում են բաժին, որտեղ այն պահվում է քրեակատարողական ծառայությունում ծառայության ամբողջ ընթացքում:

6. Քրեակատարողական ծառայության պաշտոնից «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 51.27-րդ հոդվածի (բացառությամբ 1-ին մասի 7-րդ և 20-րդ կետերի) հիմքերով ազատված անձի զինվորական գրքույկը, զինվորական կրճատված անձնական գործը (առկայության դեպքում) զինված ուժերում զինվորական հաշվառման վերցնելու համար ազատման մասին հրամանի արձակման օրվանից հետո 10-օրյա ժամկետում բաժնի կողմից համապատասխան տեղեկանքի հետ միասին՝ համաձայն N 2 ձևի, ուղարկվում է քրեակատարողական ծառայողի բնակության վայրի զինվորական կոմիսարիատ: Ծառայության ընթացքում ծառայողի բնակության վայրը փոխվելու դեպքում՝ նշված նյութերն ուղարկվում են նոր բնակության վայրի զինվորական կոմիսարիատ:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար**

Դ. Սարգսյան

Ձև N 1

Ա Ն Վ Ա Ն Ա Կ Ա Ն Ց ՈՒ Ց Ա Կ

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԵՎ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՆԹԱԿԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ

NN ը/կ	Ազգանունը, անունը,	Ծննդյան տարե-	Պահեստա- գործի զին-	Զինվորահրամա- նատարական	Ում հրամանով	Երբ, ում և ինչ էլքի
-----------	-----------------------	------------------	------------------------	----------------------------	-----------------	------------------------

հայրանունը	թիվը	վորական կոչումը	մասնագիտությունը, թիվը	և ինչ պաշտոնի է նշանակվել, հրամանի համարը, տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	համարով են ուղարկվել հաշվառման փաստաթղթերը

Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի անձնակազմի կառավարման բաժնի ղեկավար _____ (կոչումը)

_____ (ստորագրությունը)

_____ (անունը, ազգանունը)

Ձև N 2

_____ (էլքի համարը)

_____ (ուր է ուղարկվում)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՅԻՆԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏՎԱԾ ԶԻՆԱՊԱՐՏԻ ՄԱՍԻՆ

Տրվում է այն մասին, որ _____ (անունը, հայրանունը, ազգանունը)

ազատման պահին ունեցել է _____ կոչում (դասային աստիճան), որը շնորհվել է 20 թ. _____ -ի N _____ հրամանով:

Ծնված՝ 19 թվականին, հաշվառման մեջ է գտնվել ՀՀ քրեակատարողական ծառայությունում _____ թ. _____ -ից (N _____ հրաման) մինչև 20 թ. _____ -ը:

Ազատվել է _____ 20 թ. _____ -ի N _____ հրամանով:

Բնակության վայրը _____

Առդիր _____

(զինվորական գրքույկ, զինվորական կրճատված անձնական գործ, գորակոչային կցագրման վկայական) (անհրաժեշտ է նշել)

Քրեակատարողական ծառայության
Կենտրոնական մարմնի անձնակազմի
կառավարման բաժնի ղեկավար _____

(կոչումը)

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

_____ 20 թ.
Կ.Տ.